բեթ խաթունը և Թագուհին ալ նոյն տեսակ գրքեր կ'ուզէին, հրամայեց որ գնեմ։

Շատ անգամ տեսեր եմ Աղիսաբեթ՝ խաթունը որ իր անկողնին քովը ծունկի եկած ջերմեռանդն կ'աղօթէր։

Յամը 9ին իշխանազուններըը կու գային որ Թագաւորին և իր որդւոյն հետ նախաճաշկի երթան, և ես ալ հետերնին կ'երթայի. նախաճաշը լմընցնալէն ետքը իրեք իշխանուհիներուն գլուխը կը շտկի, և Թագուհւոյն հրամանովը նոյնը իր աղջկանը սորվեցուցի. նոյն միջոցին Թագաւորը կամ Թագուհւոյն և կամ Աղիսաբեթ խաթունին հետ սատրինջ կամ ուրիշ խաղ մը կը խաղար։

Վերջանէն վերջը Թագաժառանգ իշխանը և իր քոյրը նախասենեկին մէջ այլ և այլ խաղերով կը զուարճանային. միշտ հոն կ'ըլլար նաև Աղիսաբեթ խաթունը, ու սեղանատախտակի մը քով նստած ձեռքը գիրք մը առած կը նըստէր։ Ան ալ միշտ նոյն խուցը կը գըտնուէի, ու երբեմն ալ կը կարդայի, և ընդհանրապէս իշխանուհին զիս նստեցընել կու տար։ Այսպէսով ահա անդին ասդին կը ցրուէր Թագաւորական ընտանիքը. և երկու պահապան զինուորները հսկելու համար շատ կ'աշխատէին, որոնք չէին ուզեր մինակ Թողուլ զԹագաւորը և Թագուհին, և ասուաւել որ բաժնուին իրարմէ, վասն զի երկուքին վրան ալ չէին վստահիր։ Սակ Աղիսաբեթ խաթունը աս ատենս յարմար սեպելով այլ և այլ բաներ ինծի կը հարցընէր և զանազան հրամաններ կու տար, և ես իրեն մտիկ կ'ընէի ու ըստ տեղւոյն կը պատասխանէի, առանց աչքերս՝ ձեռքս եղած գրքին վրայէն դարձընելու, որպէս զի յանկարծ պահապաններուն կասկած մը չտամ։ Սակ Թագաժառանգը և Թագուհին, իրենց խաղալուն ձևերովն ու ձայներովը մեր խօսիլը կը դիւրացընէին, և շատ անգամ ալ նշան կ'ընէին որ պահապաններըը խուց մտնալու վրայ են։ Պէտք էր որ աւելի զգուշանայինք Պէզօնէն, ուսկից նաև նոյն իսկ պահապաններն կը վախնային, վասն զի շատ անգամ զիրենք ալ ամբաստանած էր աս մարդուս չարութիւնը որ և ոչ Թագաւորին և Թագուհւոյն անուշ վարմունքը իրեն չարութիւնը կրցաւ մեղմացընել։

Երբոր քնանալու ատենը կու գար, պահապաններըը իրենց անկողինը նախասենեակին մէջ կը դնէին, ու անանկ դիրքով մը որ Թագաւորին խուցը չէր կրնար մտցուիլ։ Իմ խուցիս ալ այն դուռը կը փակէին, ուսկից կրնայի Թագաւորին խուցը մտնալ, և բանալին ալ կը պահէին, անանկ որ եԹէ գիշերը Թագաւորը զիս կանչէր, պէտք էր որ նախասենեկէն անցնէի, և պահապաններուն տուտուալը լսելով սպասէի որ արԹընան։

բ և ա կ ա ն

ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Խոնաւառութիւն օդոյ։

Օդոյն մէջ միշտ ջրոյ գոլորշի կը գըտուի, որ անդադար հողագնտոյս հեղուկ մակերևուԹէն կը վերանայ։ Երբ կատարեալ գոլորշի է, Թէ և յորդ ալ ըլլայ, մԹնոլորտին ԹափանցկուԹիւնը չխափաներ, և միայն անոր կապուտակուԹիւնը ԹեԹև սպիտակուԹեան կը փոխէ։ Անաւանդ ջրոյ կատարեալ գոլորշին օդն աւելի Թափանցիկ կ'ընէ, ինչպէս այս գիշերներն որ յորդ է, երկնից կամարն աւելի աստեղազարդ կը տեսնենք, որ մերձաւոր անձրևի նշանակ է։

Այս գոլորշին է օդոյն խոնաւուԹիւն պատճառ, և սակայն բնուԹեան տնտեսուԹեանը մէջ շատ և մեծամեծ բարիք կը մատակարարէ։ Օդոյն խոնաւուԹիւնը վերցընենք, ջրոց շրջաբերուԹիւնը խափանենք, որ ծովէն գոլորշին կը սփռին մԹնոլորտին ծոցը, և ետքէն անձրև փոխուելով երկիրս կ'ողողէն,

ու առուակներ, հեղեղներ, գիտեր ձեռանալով նորէն ծով կը դառնան, շատ չանցնիր լերանց կանաչազարդ կողերը և դաշտաց ու արտօրէից գործունեայ տեսարանը, որ ջրոց բարերարութեամբ կը զովանան ու ծարաւնին կ'անցընեն, կը մերկանան իրենց գեղեցկութիւնը ու աւերակ և անապատ կը դառնան, կենաց և ոչ նշոյլ մը վրանին մնալով։ Շրջաբերական շարժումը ամէն կենաց հարկաւոր պայմանն է։ Բարեբաղդաբար ջրոց այս մեծ շրջաբերութիւնը մարդս ոչ կրնայ մատակարարել, ոչ պաշտպանել, և ոչ դարմանել, ուստի այն կեանքը, որ ասով կը պահպանուի, և ոչ մէկ կողմանէ մրն ալ վախ ունի։

Օդը շատ կամ նուազ խոնաւ կ'ըսուի երբ ենթակայ է իր ծոցն ունեցած գոլորշիէն դիւրաւ կամ դժուարաւ ուրիշ մարմնոց տալու։ Օդոյ որոշեալ տաքութեան մը տակ այս ինչ քանակութենէ մը աւելի գոլորշի չկրնար բովանդակուիլ։ Տարածոցի մը, և ոչ օդոյ որոշեալ զանգուածի մը մէջ ըսինք, վասն զի գոլորշւոյ քանակութիւնը ամենևին կախումն չունի օդոյ քանակութենէն. գոլորշին ինքն իրեն միջոցին մէջ կը կենայ, և իր պայմանները նոյն են, թէ՛ օդը խիտ եղեր է, թէ անօսր, և թէ ամենևին ալ օդ չըլլայ։ Ամէն անգամ որ օդոյ խոնաւութեան վրայ խօսք կ'ըլլայ, յատկապէս միջոցի խոնաւութիւն պէտք է հասկընալ։

Եթէ որ օդը տաքնայ ընդունակ կ'ըլլայ մեծագոյն քանակութեամբ գոլորշի իր մէջ բովանդակելու։ Երբ օդը ուրչափ քանակութեամբ գոլորշի կրնայ բովանդակել նէ բովանդակէ, կ'ըսուի թէ գոլորշւով յագեալ է. և որովհետև այն ատեն աւելի ենթակայ է ուրիշ մարմնոց տալ իր գոլորշիէն, անոր համար իր խոնաւութիւնը մեծագոյն ասպիճանի է։ Եւ եթէ այս յագեալ օդը աւելի տաքնայ առանց ընդունելու իր մէջն ուրիշ գոլորշի, յագութենէն կը դադրի, և խոնաւութիւնը կը նուազի։ Այսկէ կը տեսնուի որ օդոյն խոնաւութիւնը որ միայն կը կախուի որոշեալ միջոցի մը մէջ եղած գոլորշիէն, այլ միանգամայն և բարեխառնութենէ, որ ուրչափ բարձրանայ այնչափ ընդունակ կ'ընէ այն միջոցը գոլորշւոյ, և գրեթէ խոնաւութեան մեծագոյն աստիճանն հասնելու սահմանն ընդարձակելով, կ'ըլլայ որ օդը նոյն քանակութեամբ գոլորշւոյ նըւազ խոնաւ կ'երևայ, կամ որ նոյն է աւելի չոր կ'ըլլայ։

Խոնաւ օդոյն գոլորշին մասամբ մարմնոց վրայ կրնայ նստիլ և անոնց երեսը հեղուկ թաղանթ մը կապել ու անոնց ծակտեաց մէջն ալ թափանցել։ Այսպէս մարմինները ջուր ծծելով այլ և այլ փոփոխութիւններ կը կրեն։ Փայտերը կ'ուռին երկայնութիւնին առանց կորսընցընելու, վասն զի ջուրը անոնց թելերուն միջոցը կը մտնէ։ Այս է պատճառ որ խոնաւութեան ժամանակ դռներն ու պատուհանները կ'ուռին. իսկ զօրութեան ժամանակ կը քաշուին ու տեղերնին կու գան. բայց այսպէս խոնաւութիւն ծծելով ու չորնալով կը քայքային ու կ'աւրուին. ուստի այս վնասուց առջևն առնելու համար իւղային վէռնիճները կը գործածուին, որոնց ծակտիքը խոնաւութեան տեղիք չեն տար։ Փայտին ջուր ծծելով ուռելուն ուժը այնպէս զօրաւոր է, որ կրնայ քարեր ճղքել։ Եթէ որ քարէ երկայն գլան մը ունենանք և ուզենք պզտի գլաններու վերածել ջրաղացքի քար շինելու համար, բաւական է առանցքին ուղղահայեաց ճեղքուածները բանալ և այն ճեղքուածներուն վրայ շառաւիղներուն ուղղութեամբ ծակեր փորել ու անոնց մէջը թակով չոր գաւազաններ խօթել և դրսէն այն գաւազանները թրջել. շատ չանցնիր այն գլանը կտոր կտոր կ'ըլլայ, վասն զի գաւազանները կ'ուռին ու սեպերու պաշտօն կը կատարեն։

Ղուանները խոնաւութիւն ծծելով կը հաստընան, բայց միանգամայն կը կարճընան. ուստի ուզելով որ և իցէ բեռ մը վաճառք չուանով ամուր կա-

պել, պէտք է նախ ամէն կողմանէ այն բեռը չուանով կապել ու ետքէն չուանը թրջել. երբոր չուանը կարձընալով բեռը կը սկսի սղմուիլ, առաջնոյն քովէն երկրորդ չուանով մը պէտք է նոյնպէս կապել ու առաջինը քակել և երկրորդը թրջել։

Հասարակ թուղթը, այլ և այլ ուղղութեամբ իրարու քով եկած թելերէ կը կազմուի, թայութեամբ դէպ 'ի ամէն կողմ կ'ընդարձակի և չորնալով նուրէն կը քաշուի։

Աղերէն ոմանք, ինչպէս է օրինակի համար հասարակ աղը, օդոյն խոնաւութենէն այնչափ ջուր կը ծծեն որ կը լուծուին ու կը ջրջրկին։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

Արևելեան վերջին խնդիրն ու պատերազմը [1]:

1855 — ԱՊՐԻԼ

27. Տրուէն որ Լ'իւի Վեննայէն կ'ելլէ։

28. Գաղղիացւոց կայսրը սպաննելու փորձ մը։ Յանցաւորը, Բիանոռի, որ փախստական իտալացի մըն էր, յաջորդ ամսուն 14ին կը սպաննուի։

Ռուսիոյ արքունիքը շրջաբերական ծանուցագիր մը կը խաւրէ իր պատուիրակներուն, ծանուցանելով ինչ որ Վեննայի ժողովքին մէջ եղաւ, և թէ ինչու համար խափանուեցաւ ու օգուտ մը չելաւ անկէ, և թէ ինչ մտածութիւն ունեցաւ Ռուսասան առաջարկուած խնդիրներուն քննութեանը մէջ։

Առաջին խնդիրը քաղաքական տեսութեամբ մըտածելով նախանձորդութեան մը վէճ էր. բայց կայսրը Դանուբեան իշխանութեանց բարւոյն համար զոհեց իր նախանձորդութիւնը։ Երկրորդը վաճառականութեան ընդհանուր բարւոյն հետ վերաբերութիւն ունեցող խնդիր մըն էր. կայսրը ամէն ազգաց վաճառականութեան ազատութեանը համեմատ ճամբայ բռնեց։ Երրորդը չէ թէ միայն պարզ ընդհանուր հաւասարակշռութեան վերաբերող խնդիր մըն էր, այլ մասնաւորապէս Ռուսաց կայսեր պատուոյն և իշխանութեանը դպչող երևցաւ. զայս այսպէս կը ճանչնայ բոլոր ազգն ալ միանգամայն։ Չորրորդը կրօնական ազատութեան և ընդհանուր քրիստոնէութեան և ընկերական կենաց քաղաքակրթութեանը պատշաճող խնդիր մըն էր. ու այնպիսի կարևոր խնդիր մը՝ որ ըստ այնմ կարծեաց Ռուսիոյ արքունեաց օր պիտի գայ որ ընդհանուր խաղաղական դաշնադրութեան մը գլուխը պիտի դրուի, որուն Եւրոպիոյ ամէն թագաւորներն ալ պիտի ստորագրեն։

30. Պաշտօնագիր Նեսելրոտ կոմսին Ռուսաց Ֆրանքֆորթ կեցող Կլինքա անուն պատուիրակին։ Ասով կը ծանուցանէ թէ որովհետև Վեննա եղած ժողովքին մէջ առանց հակառակութիւն մը կրելու ընդունելի եղան Դանուբեան իշխանութեանց և Դանուբի նաւարկութեան վերաբերեալ աս երկու խնդիրները, անոր համար կը փափաքի կայսրը որ Գերմանական դաշնակցութիւնը աս խնդիրներուն դաշնադրութեան ձև մը տայ, աւելի ազգու և զօրաւոր ընելու համար։ Եւ թէպէտ Վեննայի ժողովքը լուծուեցաւ, որով և կանոնաւորեալ պարտականութիւն մը չկրնար պահանջուիլ երկու կողմանէ ալ աս դաշանց պահպանութեանը, բայց որովհետև աս երկու խնդիրներս Գերմանիոյ օգտին և շահուն հետ վերաբերութիւն ունին, անոր համար կայսրը կ'ուզէ որ աս երկու խնդիրներուն վերաբերեալ որոշմունքները պարտաւորիչ ըլլան, քանի որ Գերմանիա ամենայն կերպով չէզոք կեցած ոչ մէկ կողմին և ոչ մէկալին բանին կը խառնուի։

ՄԱՅԻՍ

1. Գաղղիացիք Սեւաստոբոլի կեդրոնական մարտկոց ըսուածին առջևի պատնէշներուն կը տիրեն. երկրորդ օրը Ռուսները փորձ մը կ'ընեն նորէն ձեռք ձգելու, բայց չեն յաջողիր։

3. Անգղիացւոց Տրնտաս ծովակալը պաշարման վիճակի մէջ կը դնէ Պալթիկ ծովուն մէջի եղած Ռուսաց նաւահանգիստները։

6. Ռուսաց կայսրը Ուքազ մը կը հրատարակէ որով նոր զօրաժողով մը կը պատուիրէ (12 առ հազար) տէրութեան արևմտեան 17 գաւառաց համար. իսկ մնացած 11 գաւառներուն համար ալ (23 առ հազար) որն որ պիտի կատարուի ինչուան Օգոստոսի 12։

7. Նաբոլէոն կայսրը Տրուէն որ Լ'իւիին հրաժարումը ընդունելով իր տեղը Քոլոննա Վալեվսքի կոմսը արտաքին գործոց պաշտօնեայ կ'անուանէ։

8. Ծանուցագիր Գլարէնտըն կոմսին առ կոմսն Ուեստմորլէնտ 'ի Վեննա. որուն մէջ կը խօսի Պուլ կոմսին Աւստրիոյ Լոնտրա կեցող դեսպանին խաւրած պաշտօնագրին վրայօք, որն որ Ապրիլ 23ին խաւրուած էր։ Եթէ Աւստրիա կարենայ գտնալ իրաւախոհութեան նոր ճամբայ մը, Անգղիա պատրաստ է անոր վրայ մտածելու ու խօսելու, բաւական է որ Լոնտրայի դահլիճին տեսու-

1 Տես Հտ. ԺԳ, երես 15, 92, 159, 191, 223, 255, 286, 334. Հտ. ԺԴ, երես 11, 82, 129, 162, 227, 275, 307, 355, 371. ԺԵ, երես 15, 51, 131։